



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԵՂՎԱՐԴԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

N 18
13 հունիսի 2011թ.
ք. Եղվարդ






ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ
ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 1-ին մասի 27-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի, հիմք ընդունելով «Երամար» ՍՊԸ-ի տնօրեն Սիրանուշ Սիմոնյանի կողմից Եղվարդի համայնքի ղեկավարին ներկայացված դիմումը՝


ԵՂՎԱՐԴԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

- Հավանություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ «Երամար» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող, 0586-0016 կադաստրային համարի տակ գտնվող 0,5000 հեկտար գյուղատնտեսական նշանակության հողամասից 0,1500 հեկտարի նպատակային նշանակությունը գյուղատնտեսականից արտադրականի փոփոխելու վերաբերյալ:
- Առաջարկել համայնքի ղեկավարին դիմել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետին՝ հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը օրենքով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը ներկայացնելու առաջարկով:
- Սույն որոշման առաջին կետն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին իրավական ակտն ընդունելու և դրա ուժի մեջ մտնելու պահից:


Եղվարդի քաղաքային համայնքի ավագանու անդամներ՝

<u>ԿՈՂՄ</u>	<u>ՂԵՄ</u>	<u>ՁԵՆՆՊԱՀ</u>	
 /ստորագրություն/	_____	_____	Վ. Ամիրխանյան
 /ստորագրություն/	_____	_____	Գ. Գևորգյան
 /ստորագրություն/	_____	_____	Վ. Գևորգյան
 /ստորագրություն/	_____	_____	Գ. Գրիգորյան
 /ստորագրություն/	_____	_____	Ռ. Զոհրաբյան


/ստորագրություն/




/ստորագրություն/



/ստորագրություն/



/ստորագրություն/



/ստորագրություն/

/ստորագրություն/

/ստորագրություն/

/ստորագրություն/

/ստորագրություն/

/ստորագրություն/

/ստորագրություն/

/ստորագրություն/

/ստորագրություն/

/ստորագրություն/

/ստորագրություն/

Գ. Հովհաննիսյան

Կ. Սարտիրոսյան

Է. Նիկոլյան

Ը. Պետրոսյան

Ա. Սարգսյան

Համայնքի ղեկավար Ն. Սարգսյան

